

ОБРАЗОВАНИЕ

Բուհական կրթության ժամանակակից հիմնախնդիրները և մարտահրավերները

Ոսկանյան Մարգարիտա Ա.

Հայցորդ, Մանկավարժության ամբիոն

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0004-2970-1609>

voskanyanmargarita@aspu.am

ՀՏԳ՝ 37.013.73.2; EDN: OOCWDE

DOI: 10.58587/18292437-2026.1-132

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ բուհական կրթություն, հիմնախնդիրներ, կառավարում, ինքնավարություն և հաշվետվողականություն, կրթության որակ, ինստիտուցիոնալ մոտեցում

Современные фундаментальные проблемы и вызовы высшего университетского образования

Восканян Маргарита А.

Соискатель, Кафедра педагогики,

Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна (Ереван, РА)

Анотация: Современное высшее образование функционирует в условиях быстро меняющейся среды, обусловленной глобальными тенденциями, технологическим развитием, государственной политикой и требованиями рынка труда. В этом контексте системы управления вузами сталкиваются со сложными вызовами, требующими системного и стратегического подхода. Быстрое обновление знаний, обеспечение качества, институциональная автономия и финансовая устойчивость, а также интеграция цифровых технологий и развитие сотрудничества «государство – вуз – общество» остаются ключевыми приоритетами, способствующими формированию конкурентоспособной и устойчивой системы высшего образования:

Ключевые слова и словосочетания: Высшее образование, фундаментальные проблемы, управление, автономия и подотчётность, качество образования, институциональный подход

Contemporary Fundamental Issues and Challenges of Higher University Education

Voskanyan Margarita A.

PhD Applicant / Doctoral Candidate, Department of Pedagogy,

Khachatur Abovyan Armenian State Pedagogical University (Yerevan, RA)

Abstract. Modern higher education operates in a rapidly changing environment shaped by global trends, technological advancement, public policy, and labor market demands. In this context, university governance systems face complex challenges that require systemic and strategic approaches. Rapid knowledge renewal, quality assurance, institutional autonomy and financial sustainability, as well as the integration of digital technologies and the development of state–university–society cooperation, remain key priorities for building a competitive and sustainable higher education system.

Keywords and phrases: Higher education, fundamental issues, management, autonomy and accountability, quality of education, institutional approach

21-րդ դարում բարձրագույն կրթության համակարգերը գտնվում են քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և գիտատեխնիկական սրընթաց փոփոխությունների ազդեցության ներքո, որոնք պայմանավորում են դրանց զարգացման կառավարման և որակի ապահովման գործընթացների արդյունավետությունը: Բարձրագույն մասնագիտական կրթության կառավարման համակարգի բաղադրատարրերը հետադարձ կապով շահակապված են և հարաշարժ բարեփոխումների են ենթարկվում [3, էջեր 17-20]:

Բուհերը դիտարկվում են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային օղակ: Այս համատեքստում բուհի զարգացման կառավարումը դիտարկվում է ոչ միայն բուհի ներքին կառավարման հարց, այլ՝ երկրի կրթական քաղաքականության, տնտեսական ռազմավարության, գիտական ներուժի վերափոխման և միջազգային համագործակցության ընդայնման առանցքային դաշտ: Բուհի զարգացման կառավարման արդյունավետությունը որոշիչ է դառնում՝

- կրթության որակի,

- գիտահետազոտական ներուժի և մարդկային ռեսուրսների զարգացման,
- աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման,
- միջազգայնացման,
- հանրային վստահության և բուհի ճանաչելիության բարձրացման տեսանկյունից:

Մակայն գլոբալ փոփոխությունների այս պայմաններում բուհերը բախվում են մի շարք մարտահրավերների, որոնք ճգնաժամային են դառնում ոչ միայն առանձին բուհերի, այլ ողջ կրթական համակարգի համար: Գիտելիքի արագ նորացումը, տեխնոլոգիական արագընթաց զարգացումները, թվային ուսուցման ընդլայնումը, հասարակության և աշխատաշուկայի պահանջների արմատական փոխակերպումները, միջազգային չափորոշիչները, ինստիտուցիոնալ ինքնավարության խնդիրները, ֆինանսավորման սահմանափակումները, կառավարման կառուցվածքների ոչ արդի մոտեցումները դառնում են այն հիմնական մարտահրավերները, որոնք այսօր դիտվում են բուհական կրթական համակարգում [6, էջեր 2-21]:

Ըստ էության, ժամանակակից բարձրագույն կրթության համակարգում առկա մարտահրավերները ցույց են տալիս, որ բուհերի զարգացման կառավարման խնդիրների լուծումը պահանջում է համակարգային և ինտեգրացված մոտեցում, որը միաժամանակ հաշվի է առնում բուհական կրթական համակարգի ներքին ինստիտուցիոնալ կարողությունները, միջազգային զարգացման միտումները և պետական քաղաքականության գերակայությունը:

Բարձրագույն կրթության ոլորտը ընդգրկում և բազմաբովանդակ է, այդ իսկ պատճառով կարելի է առանձնացնել հիմնախնդիրների մի քանի խմբեր:

Գիտելիքի արագ փոխակերպում և նորացում

Մերօրյա բուհական կրթության առաջնային հիմնախնդիրներից մեկը կուտակվող և փոխանցվող գիտելիքի անհամապատասխանությունն է հասարակության և աշխատաշուկայի անընդհատ փոփոխվող պահանջներին:

Կրթական տեխնոլոգիաների շարունակական զարգացումը էականորեն փոխում է ուսանողի տեղն ու դերը բուհական կրթական գործընթացում: Ուսանողները այլևս չեն դիտարկվում պարզապես պատրաստի գիտելիք ստացող օբյեկտներ, այլ հանդես են գալիս որպես գիտելիք ստեղծող, վերլուծող և այն կիրառող ակտիվ սուբյեկտներ: Այնուամենայնիվ, բուհական համակարգերը հաճախ դանդաղ են արձագանքում արտաքին միջավայրի փոփոխություններին, ինչը խոչընդոտում է բուհերի մրցունակությանը, հետազոտական ներուժի զարգացմանը և ուսանողների

կարողունակությունների համապարփակ ձևավորմանը: Այս իրավիճակը ցույց է տալիս, որ բարձրագույն կրթության համակարգում անհրաժեշտ է գուտ գիտելիքի փոխանցման տրամաբանությունից անցում կատարել դեպի կյանքի ընթացքում ակտիվ սովորելու, գործելու, ստեղծելու, հետազոտությամբ առաջնորդվող կրթության սկզբունքների:

Բուհ-աշխատաշուկա կապեր և հարաբերություններ

Ժամանակակից բուհական կրթական համակարգերում կարևոր նշանակություն ունի բուհերի և հասարակության փոխազդեցությունը: Շահակիցների՝ գործատուների, շրջանավարտների, քաղաքացիական հասարակության ներգրավվածության պակասը նվազեցնում է կրթական ծրագրերի համապատասխանությունը և սահմանափակում բուհի հանրային դերակատարությունը:

Աշխատաշուկայի սրընթաց փոխակերպումների, մասնավորապես՝ թվայնացման, արհեստական բանականության և նոր մասնագիտությունների ի հայտ գալու համատեքստում, առաջացել է անհամապատասխանություն կրթության և աշխատաշուկայի պահանջների միջև: Հաճախ բուհերը չեն տալիս աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գիտելիք ու հմտություններ, ինչը կարող է պայմանավորված լինել բուհի կառավարման գործընթացում և հատկապես ուսումնական պլանների մշակման գործընթացում շուկայի պահանջները հաշվի չառնելով [1, էջ 263]: Որպես բարձրագույն կրթության և աշխատաշուկայի միջև առկա անհամապատասխանության պատճառներ կարող են դիտարկվել՝

- շրջանավարտների ոչ որակյալ մասնագիտական պատրաստվածությունը,
- ոչ արդիական կրթական ծրագրերը,
- գիտահետազոտական քաղաքիչի թուլությունը,
- գործատուների ցածր ներգրավվածությունը:

Բարձրագույն կրթության որակի ապահովում և վերահսկողություն

Մասնագիտական կրթության որակի ապահովման ներքին և արտաքին համակարգեր ստեղծելու և ամրապնդելու պահանջն աճել է ամբողջ աշխարհում, քանի որ վերջին քսանամյակում շեշտակի աճել են մասնագիտական ուսումնական հաստատությունների և ուսանողների թիվը և դրանց հատկացվող հանրային ու մասնավոր ներդրումները: Բոլոնիայի հոչակագիրն ստորագրած բոլոր երկրների կրթության նախարարներն ընդգծել են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում հավատարմագրման կամ որակի ապահովման համա-

կարգեր ներդնելու անհրաժեշտությունը («Բեռլինի կոմյունիկե», 2003 թ.):

Բոլոնիայի հռչակագիրն ստորագրած բոլոր երկրներում որակի արտաքին ապահովումը պարտադիր գործընթաց է: Եվրոպայի գրեթե բոլոր երկրներն արձագանքել են այս պայմանին՝ հիմնելով և կիրառելով կրթական ծառայությունների որակը բարելավող և արդյունքները հավաստող համակարգեր [5, էջեր 12-17]: Որակի ապահովման ազգային և միջազգային մեխանիզմների ներդնումը բուհերի կառավարման համակարգում առաջացնում է մի շարք բարդություններ, որոնք հաճախ դանդաղեցնում են համակարգային բարեփոխումների արդյունավետությունը: Որակի ապահովման պահանջները ենթադրում են բարձր մակարդակի ինստիտուցիոնալ կարողություններ, որոնք շատ դեպքերում բուհերն ամբողջությամբ չեն տիրապետում: Բուհերը հաճախ չունեն բավարար մարդկային, ֆինանսական և այլ ռեսուրսներ՝ իրականացնելու մշտադիտարկում, ներքին գնահատում, ուսումնական ծրագրերի շարունակական վերանայում: Որակի ապահովման չափորոշիչները մշտապես զարգանում են՝ հետևելով եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (EHEA) ձևավորվող նոր մոտեցումներին: Սա հաճախ առաջացնում է նորմատիվ և բովանդակային անհամապատասխանություններ, քանի որ բուհերի դժվարությամբ են հարմարվում նոր չափորոշիչներին: Այս բոլոր մարտահրավերները միասին ենթադրում են որակի ապահովման մի համակարգ, որը դեռևս գտնվում է ձևավորման փուլում և պահանջում է ռազմավարական և ռեսուրսային արմատական փոփոխություններ՝ իրապես արդյունավետ և կայուն դառնալու համար:

Բուհի ինքնավարություն

Ժամանակակից բարձրագույն կրթության համակարգում բուհերի ինստիտուցիոնալ ինքնավարությունը համարվում է արդյունավետ կառավարման, ակադեմիական ազատության, գիտահետազոտական ստեղծարարության և կազմակերպական ճկունության հիմնական նախադրյալներից մեկը: Հայաստանյան բարձրագույն կրթական օրենսդրությամբ ինքնավարության սկզբունքը ամրագրված է բազմաբաղադրիչ ձևով՝ ներառելով ակադեմիական, կազմակերպական, մարդկային ռեսուրսների կառավարման, ֆինանսական և կառավարման այլ ոլորտներ: Սակայն օրենսդրական դաշտում ինքնավարության սահմանումն ինքնին բավարար չէ. ինքնավարության իրական իրականացման մեխանիզմները, դրա գործնական կիրարկումը և պետություն-բուհ հարաբերությունների ամբողջ համակարգը շարունակում են ձևավորվել բարդ, երբեմն հակասական միջավայրում, ինչը բուհերի համար ստեղծում է

կառավարման բազմաշերտ մարտահրավերներ [4, Հոդված 7] **Հաշվետվողականություն և թափանցիկություն**

Բարձրագույն կրթության ոլորտի խնդիրներից է արդյունավետ կառավարման և հավասարակշռված հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների կիրառությունը: Ծրագրերի մշակումը ուսումնառության վերջնարդյունքների հենքով գուրկ է ակադեմիական առաջընթացին, հանրային զարգացման և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ճկուն արձագանքելու հնարավորություններից: Ցածր է համակարգի արդիականացման, միջազգայնացման և դրանցից բխող մրցունակության աստիճանը: Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները միջազգային վարկանիշավորման աղյուսակներում ներառված չեն լավագույն հինգհարյուրյակում: Ներկայում արձանագրված լավագույն ցուցանիշը Երևանի պետական համալսարանինն է, որն ընդգրկվել է QS World University Rankings 2022 թվականի լավագույն հազարյակում: Այս հիմնախնդիրները սահմանափակում են բուհերի կարողությունը՝ ձևավորելու կայուն զարգացմանը նպաստող կրթական միջավայր և ներգրավելու առաջատար գործընկերներին [2]: Հետևաբար անհրաժեշտ է բարեփոխումների համալիր փաթեթ, որը կավելացնի կառավարման արդյունավետությունը, կխթանի միջազգայնացումը և կբարձրացնի բուհերի մրցունակությունը միջազգային դաշտում:

Ֆինանսական կայունություն

Բուհերի ֆինանսական կայունությունը և ռեսուրսների արդյունավետ կառավարումը ժամանակակից բարձրագույն կրթության հիմնական և որոշիչ պայմաններից են, քանի որ դրանք ուղղակիորեն ազդում են կրթական ծրագրերի որակի, գիտահետազոտական գործունեության ծավալի, նորարարական ներուժի, մարդկային ռեսուրսների պահպանման և բուհի միջազգային մրցունակության վրա: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ֆինանսավորման աղբյուրների բազմազանությունը, պետության կողմից կիրառվող ֆինանսավորման ձևաչափերը և գիտատեխնոլոգիական գործունեության համար նախատեսված բյուջետային մեխանիզմները ձևավորում են բուհերի ֆինանսական միջավայրի իրավական հիմքը, սակայն միաժամանակ առաջացնում են նաև մի շարք կառուցվածքային ու գործառնական խնդիրներ, որոնք սահմանափակում են բուհերի ինստիտուցիոնալ կայունությունն ու զարգացման հնարավորությունները [4, Հոդված 39]:

Նոր տեխնոլոգիաների ինտեգրման դժվարություններ

Նոր տեխնոլոգիաների և թվային միջոցների ինտեգրումը բարձրագույն կրթության համա-

կարգ, դարձել է ոչ միայն արդիականացման կարևոր գործոն, այլ՝ պարտադիր պահանջ: Սակայն թվայնացման գործընթացը բախվում է մի շարք խոչընդոտների՝

- թվային ենթակառուցվածքների անբավարար զարգացում,
- թվային հմտությունների զարգացման ցածր մակարդակ ուսանողների և աշխատակիցների շրջանում,
- տվյալների կառավարման քաղաքականության բացակայություն,
- կրթական տեխնոլոգիաների ոչ համակարգված կիրառում [7, էջեր 66-70]:

Համակարգում առկա մարտահրավերները բուհերից պահանջում են կառավարման այնպիսի մոդելներ, որոնք ներառում են տվյալների վրա հիմնված որոշումների կայացում, արհեստական բանականության գործիքների համապատասխան կիրառություն կրթական և վարչական գործընթացներում, ինչպես նաև թվային կրթական էկոհամակարգերի ստեղծում:

Ամփոփելով՝ կարող են ասել, որ ժամանակակից բուհական կրթության համակարգը գործում է արագ վերափոխվող և բազմաշերտ միջավայրում, որտեղ փոխկապակցվում են գլոբալ միտումները, տեխնոլոգիական զարգացումները, պետական քաղաքականությունը և աշխատաշուկայի փոփոխվող պահանջները: Այս պայմաններում բուհերի կառավարման համակարգը հաճախ բախվում է բարդ ու հակասական մարտահրավերների, որոնք պահանջում են համակարգային, տվյալահեն և ռազմավարական մոտեցումներ: Գիտելիքի արագ նորացումը, որակի ապահովման արդյունավետ մեխանիզմների ներդրումը, ինստիտուցիոնալ ինքնավարության ու ֆինանսական կայունության ապահովումը, թվային տեխնոլոգիաների ինտեգրումը և պետություն-բուհ-հասարակություն համագործակցության զարգացումը շարունակում են

մնալ առանցքային ուղղություններ: Դրանց արդյունավետ իրականացումը հնարավորություն կտա ձևավորել մրցունակ, կայուն և շարունակական զարգացում ունեցող բարձրագույն կրթության համակարգ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ալեքսանյան Ա. Հակոբյան Հ.,** Բուհի կառավարման ժամանակակից հիմնախնդիրները արդիականացող աշխարհում // Գիտական Արցախ, 1 (2), 2019:
2. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր», 2022:
3. **Ճուղուրյան Ա., Մխիթարյան Ա., Ավետիսյան Ա.,** Մասնագիտական կրթության կառավարման հիմունքներ, Ուսումնական ձեռնարկ: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2024. – 121 էջ:
4. ՀՀ ՕՐԵՆԶԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ <https://www.arlis.am/hy/acts/214346>
5. ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ: – Երևան, 2022. – 11 էջ: anqa.am/hy/հրապարակումներ/հիմնասագիտական-կրթության-փորձաքննության-անցկացման-ձեռնարկ-2022թ
6. **Dill, D. D., & Beerkens, M.,** Public Policy for Academic Quality: Analyses of Innovative Policy Instruments. Springer, 2010. – 341 p.
7. **Williamson, B.,** Big Data in Education: The Digital Future of Learning, Policy and Practice. Sage, 2017. – 256 p.

Сдана / Հանձնվել է՝ 14.01.2026
 Рецензирована / Գրախոսվել է՝ 21.01.2026
 Принята / Ընդունվել է՝ 28.01.2026